Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատ

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտե

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտե

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատ

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի, Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կողմից համատեղ ստուգում՝ 2019 թվականին Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության պահպանման նկատմամբ»

(հաստատված է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի,

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի եւ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կոլեգիաների (խորհուրդների, լիազորված անձանց) համատեղ նիստի որոշմամբ, 2021 թվականի փետրվարի *19*-ի թիվ *11(1484*) արձանագրություն)

1. Համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու հիմքերը.

բոլոր կողմերի համար՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) (2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի թիվ 5 հավելված) 53-րդ կետը.

բոլոր կողմերի համար՝ «2020 թվականին Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի եւ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կողմից համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու մասին» համաձայնագիրը.

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի համար՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության ծրագիրը.

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի համար՝ Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի աշխատանքի պլանները՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի համար եւ 2021 թվականի առաջին կիսամյակի համար.

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի համար (այսուհետ՝ Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտե)՝ Պետական աուդիտի 2020 թվականի օբյեկտների ցանկը.

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի համար՝ Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2020 թվականի աուդիտորական գործունեության պլանները.

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի համար՝ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2020-2021 թվականների աշխատանքի պլանները:

2. Համատեղ վերահսկիչ միջոցառման առարկան.

լիազորված մարմինների գործունեությունը՝ ուղղված ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգը Եվրասիական տնտեսական միությունում (այսուհետ՝ ԵԱՏՄ, Միություն) կիրառելուն:

3. Համատեղ վերահսկիչ միջոցառման օբյեկտները.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն (քաղ. Երեւան).

Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարություն (քաղ. Մինսկ).

Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կոմիտե (քաղ. Նուր-Սուլթան).

Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան (քաղ. Բիշքեկ).

Դաշնային գանձապետարանի միջտարածաշրջանային գործառնական վարչություն (քաղ. Մոսկվա).

լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար նախատեսված օբյեկտները.

Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ ԵՏՀ, Հանձնաժողով), Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտե, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտե, Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայություն, Դաշնային մաքսային ծառայություն:

4. Համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու ժամկետը.

2020 թվականի նոյեմբեր-2021 թվականի փետրվար:

5. Համատեղ վերահսկիչ միջոցառման նպատակները.

5.1. Ստուգել անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարներն ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից մյուս անդամ պետությունների հաշիվներին փոխանցելու ամբողջականությունն ու ժամանակին կատարելը.

5.2. Ստուգել յուրաքանչյուր անդամ պետության համար սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները բաշխելու նորմատիվների պահպանումը լիազորված մարմինների կողմից.

5.3. Վերլուծել ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի՝ Միությունում գործարկելու արդյունքները:

6. **Գործունեության ստուգվող ժամանակահատվածը.** 2019 թվական:

7. **Համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքները.**

7.1. Անդամ պետությունների կողմից Արձանագրության այն դրույթի պահպանումը, որը վերաբերում է մաքսատուրքերն ազգային արժույթով այն անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին հաշվեգրելուն, որտեղ դրանք ենթակա են վճարման (Արձանագրության 3-րդ կետ): Ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի կիրառումը՝ ներմուծման մաքսատուրքերի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի (տոկոսների) գումարների մասով (Արձանագրության 1-ին կետ):

Արձանագրության 3-րդ կետին համապատասխան՝ 2019 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի, ինչպես նաեւ ներմուծման մաքսատուրքերի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի գումարների հաշվեգրումն իրականացվել է ազգային արժույթով այն անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք ենթակա են եղել վճարման՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող եւ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը (հաշվի առնելով հաշվանցումներն ու վերադարձները) 2019 թվականին կազմել են 62 829 141,4 հազ. դրամ, որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 766 515,5 հազ. դրամ,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 2 865 008,9 հազ. դրամ,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 4 432 595,9 հազ. դրամ,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 1 193 753,7 հազ. դրամ,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 53 571 267,4 հազ. դրամ:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2019 թվականին կազմել են 73 658 635,0 հազ. դրամ, այդ թվում՝

Բելառուսի Հանրապետությունից՝ 3 945 548,3 հազ. դրամ,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 3 953 268,0 հազ. դրամ,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 950 978,3 հազ. դրամ,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 64 808 840,4 հազ. դրամ:

Բելառուսի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2019 թվականին կազմել են 1 407 472,3 հազ. բել. ռուբլի, որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 17 171,1 հազ. բել. ռուբլի,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 64 180,7 հազ. բել. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 99 297,2 հազ. բել. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 26 742,0 հազ. բել. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 1 200 081,3 հազ. բել. ռուբլի:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2019 թվականին կազմել են 1 150 418,5 հազ. բել. ռուբլի, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 12 461,1 հազ. բել. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 64 506,7 հազ. բել. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 15 563,8 հազ. բել. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 1 057 886,9 հազ. բել. ռուբլի:

Ղազախստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2019 թվականին կազմել են 259 925 212,2 հազ. տենգե, որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 3 171 087,6 հազ. տենգե,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 11 852 589,7 հազ. տենգե,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 18 337 723,7 հազ. տենգե,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 4 938 579,0 հազ. տենգե,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 221 625 232,2 հազ. տենգե:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2019 թվականին կազմել են 326 281 076,7 հազ. տենգե, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետության կողմից բաշխված՝ 3 521 357,1 հազ. տենգե,

Բելառուսի Հանրապետության կողմից բաշխված՝ 18 258 581,4 հազ. տենգե,

Ղրղզստանի Հանրապետության կողմից բաշխված՝ 4 387 105,0 հազ. տենգե,

Ռուսաստանի Դաշնության կողմից բաշխված՝ 300 114 033,2 հազ. տենգե:

Ղրղզստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2019 թվականին կազմել են 11 257 721,0 հազ. սոմ, որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 137 344,2 հազ. սոմ,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 513 352,1 հազ. սոմ,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 794 232,2 հազ. սոմ,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 213 896,7 հազ. սոմ,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 9 598 895,8 հազ. սոմ:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2019 թվականին կազմել են 16 678 787,5 հազ. սոմ, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 172 109,2 հազ. սոմ,

Բելառուսի Հանրապետությունից՝ 883 648,4 հազ. սոմ,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 889 867,5 հազ. սոմ,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 14 733 162,4 հազ. սոմ:

Ռուսաստանի Դաշնությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2019 թվականին կազմել են 716 890 142,4 հազ. ռուս. ռուբլի, որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 8 746 059,8 հազ. ռուս. ռուբլի,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 32 690 190,5 հազ. ռուս. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 50 576 599,5 հազ. ռուս. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 13 620 912,7 հազ. ռուս. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 611 256 379,9 հազ. ռուս. ռուբլի:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2019 թվականին կազմել են 90 601 407,1 հազ. ռուս. ռուբլի, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 7 185 818,3 հազ. ռուս. ռուբլի,

Բելառուսի Հանրապետությունից՝ 37 104 001,2 հազ. ռուս. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 37 308 030,7 հազ. ռուս. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 9 003 556,9 հազ. ռուս. ռուբլի:

7.2. Լիազորված մարմնի միասնական հաշվին մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի մասով վճարումների հաշվանցում կատարելու կարգի կազմակերպումն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից (Արձանագրության 3-րդ կետ):

Արձանագրության 3-րդ կետին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց կարող են հաշվանցվել հարկեր եւ վճարներ, ինչպես նաեւ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան վճարման

ենթակա այլ վճարումներ (բացառությամբ հատուկ, հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերի), որոնք մուտքագրվել են լիազորված մարմնի միասնական հաշվին: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերը չեն կարող հաշվանցվել այլ վճարումների դիմաց՝ բացառությամբ այնպիսի հաշվանցման, որը կատարվում է մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերի, ինչպես նաեւ տույժերի (տոկոսների) վճարման մասով վճարողների պարտքի մարման դիմաց:

Հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերի հաշվեգրման եւ բաշխման հիմնադրույթին համապատասխան (ԵԱՏՄ պայմանագրի թիվ 8 հավելվածի հավելված) ներմուծման մաքսատուրքերի վճարման մասով վճարողների պարտքի մարման դիմաց կարող են հաշվանցվել հատուկ, հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերը:

Հայաստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2019 թվականին կազմել է 296,5 հազ. դրամ: Ներմուծման մաքսատուրքերի գումարներից հաշվանցումներ չեն իրականացվել:

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 543 հարցմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի մասով գումարների հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Բելառուսի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2019 թվականին կազմել է 14 981,8 հազ. բել. ռուբլի, ներմուծման մաքսատուրքերից՝ 305,3 բել. ռուբլի:

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 03/04-4716 հարցմամբ՝ Բելառուսի

Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղազախստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2019 թվականին կազմել է 242 493,1 հազ. տենգե, ներմուծման մաքսատուրքերից՝ 106 747,8 հազ. տենգե:

Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեի 2020 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4-9-2-34/3089-И հարցմամբ՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղրղզստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2019 թվականին կազմել է 1 174,9 հազ. սոմ, ներմուծման մաքսատուրքերից՝ 1 579,5 հազ. սոմ:

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 01-15/1448 հարցմամբ՝ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ռուսաստանի Դաշնությունում ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2019 թվականին կազմել է 2 150 742,8 հազ. ռուս. ռուբլի, ներմուծման մաքսատուրքերից՝ 125 946,7 հազ. ռուս. ռուբլի:

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ ՅԻ 03-139/03-03 հարցմամբ՝ Դաշնային մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

7.3. Յուրաքանչյուր անդամ պետության լիազորված մարմնի կողմից մուտքերի առանձին հաշվառման կազմակերպումը. այդ մուտքերի առանձին արտացոլումը յուրաքանչյուր անդամ պետության բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ (Արձանագրության 5-րդ կետ):

2019 թվականին անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից պահպանվել են Արձանագրության 5-րդ կետի նորմերը՝ լիազորված մարմնի միասնական հաշվին ներմուծման մաքսատուրքերի մուտքերի (վերադարձների, պարտքի մարման դիմաց հաշվանցումների) գումարների, այլ անդամ պետությունների արտարժութային հաշիվներին փոխանցված՝ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարների, տվյալ անդամ պետության կողմից ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտների՝ տվյալ անդամ պետության բյուջե հաշվեգրված գումարների, այլ անդամ պետություններից անդամ պետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարների առանձին հաշվառման եւ յուրաքանչյուր անդամ պետության բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ արտացոլման կազմակերպման մասով:

7.4. Անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարների արտացոլումը բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ: Օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցման ժամկետների պահպանումը: Այդ գումարների, ինչպես նաեւ օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների

կողմից անդամ պետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտների արտացոլումը բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ (Արձանագրության 6-րդ կետ):

Արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն արտացոլվում են տվյալ անդամ պետության՝ հաշվետու տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Անդամ պետության օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները դրա պետության բյուջե եւ մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին փոխանցվել են անդամ պետության ընթացիկ տարվա երկրորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ, ինչպես նաեւ արտացոլվել են 2019 թվականի բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Մյուս անդամ պետությունների օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տվյալ անդամ պետության բյուջե մուտքագրված՝ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտներն ենթակա են արտացոլման 2020 թվականի բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

7.5. Անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ոչ ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվառման կազմակերպումը եւ հաշվեգրման հիմնավորվածությունը:

Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ ԵԱՏՄ մասին պայմանագիր) 26-րդ հոդվածին համապատասխան եւ դրանով սահմանվում է ներմուծման այն մաքսատուրքերի գումարների հաշվեգրման եւ անդամ պետությունների միջեւ բաշխման կարգը, որոնց վճարման պարտավորությունը, Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների հետ կապված, առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Լիազորված մարմինների կողմից անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ոչ ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարները (այսուհետ՝ չբաշխվող ներմուծման մաքսատուրքեր) հաշվառվել են բյուջետային դասակարգման առանձին ծածկագրերով (այսուհետ՝ ԲԴԾ):

Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը հանրապետական բյուջե կազմել է 0,6 հազ. դրամ եւ 2018 թվականի համեմատ նվազել է 961,2 հազ. դրամով:

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 543 հարցմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի՝ անդամ պետությունների բյուջեների միջեւ չբաշխման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Բելառուսի Հանրապետությունում 2019 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը հանրապետական բյուջե կազմել է 165,2 հազ. բել. ռուբլի եւ 2018 թվականի համեմատ ավելացել է 113,6 բել. ռուբլով կամ 3,2 անգամ:

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 03/04-4716 հարցմամբ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի՝ անդամ պետությունների բյուջեների միջեւ չբաշխման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղազախստանի Հանրապետությունում 2019 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը հանրապետական բյուջե կազմել է 169 472,3 հազ. տենգե եւ 2018 թվականի համեմատ նվազել է 1 791 069,8 հազ. տենգեով կամ 11,6 անգամ:

Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեի 2020 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4-9-2-34/3089-И հարցմամբ՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված՝ Միության մաքսային սահմանով տեղափոխված ապրանքների մաքսային ձեւակերպումների վերաբերյալ փաստաթղթերի ստուգման ընթացքում արձանագրվել է հետեւյալը:

«Ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքեր եւ (կամ) ներմուծման մաքսատուրքեր, որոնք վճարելու պարտավորությունն առաջացել է մինչեւ «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) հաշվեգրման ու բաշխման կարգը սահմանելու եւ կիրառելու մասին» համաձայնագիրն ուժի մեջ մտնելը» 106112 ԲԴԾ-ով (այսուհետ՝ չբաշխվող 106112 ԲԴԾ), 2019 թվականին առկա են 60 947,9 հազ. տենգե գումարի ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման դեպքեր 2010 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ներմուծված ապրանքների մասով հետեւյալ կազմակերպությունների կողմից՝ «Ումիրզակ-Սերվիս» ՍՊԸ՝ (2 912,9 հազ. տենգե), «Արման ՀՁ» ՍՊԸ՝ (31,4 հազ. տենգե) եւ «Վեզերֆորդ Օյլֆիլդ Սերվիսեզ» ՍՊԸ՝ (58 003,6 հազ. տենգե):

Տուրքերի նշված գումարը չի բաշխվել եւ չի փոխանցվել ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ, ինչը համարվում է Արձանագրությամբ սահմանված՝ անդամ պետությունների միջեւ ներմուծման այն մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի խախտում, որոնք վճարելու պարտավորությունը, Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների հետ կապված, առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Ղրղզստանի Հանրապետությունում 2019 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը հանրապետական բյուջե կազմել է 7 873,8 հազ. սոմ եւ նվազել է 2018 թվականի համեմատ 3 953,9 հազ. սոմ կամ 1,5 անգամ:

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 01-15/1453 հարցմամբ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ անդամ պետությունների բյուջեների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների չբաշխման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում արձանագրվել է, որ 2019 թվականին «Գրանիտ» ՍՊԸ-ն սխալմամբ վճարել է ներմուծման մաքսատուրքեր «Ներմուծման մաքսատուրքեր, որոնք ենթակա են վճարման մինչեւ Ղրղզստանի Հանրապետության՝ ԵԱՏՄ-ին միանալը» 11 511 100 ԲԴԾ-ով «Ներմուծման մաքսատուրքեր, որոնք վճարվել են ՄՄՍ դրույքներով եւ հաշվեգրվել են «Եվրասիական տնտեսական միությանը միանալու մասին» պայմանագրին համապատասխան» 11 511 400 ԲԴԾ-ի փոխարեն Ղրղզստանի Հանրապետության՝ Միությանը անդամակցելուց հետո, ներմուծված ապրանքների մասով՝ 211,6 հազ. սոմ ընդհանուր գումարով:

Այսպիսով՝ ներմուծման մաքսատուրքերի նշված գումարը 2019 թվականին չի բաշխվել եւ չի փոխանցվել ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ, ինչը Արձանագրությամբ սահմանված՝ անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի խախտում է:

Ռուսաստանի Դաշնությունում 2019 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը դաշնային բյուջե կազմել է 108 079,3 հազ. ռուս. ռուբլի եւ 2018 թվականի նկատմամբ ավելացել է 110 526,6 հազ. ռուս. ռուբլով:

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ ЗИ 03-139/03-03 հարցմամբ՝ Դաշնային մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ անդամ պետությունների բյուջեների միջեւ ներմուծման մաքսատուրքերը չբաշխելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

7.6. Ավելի վճարված (ավելի գանձված) ներմուծման մաքսատուրքերի գումարների՝ վճարողին վերադարձի կազմակերպում (Արձանագրության 3-րդ, 7-9-րդ կետեր):

Ավելի վճարված (ավելի գանձված) ներմուծման մաքսատուրքերի վերադարձն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից իրականացվում է Արձանագրության դրույթներին համապատասխան՝ ազգային նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետությունում թիվ 900008000268 հատուկ հաշվից ներմուծման մաքսատուրքերի վերադարձների ընդհանուր գումարը կազմել է 52 735,7 հազ. դրամ եւ 2018 թվականի համեմատ ավելացել է 14 815,4 հազ. դրամով կամ 39,1%-ով):

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 543 հարցմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ վերադարձներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Բելառուսի Հանրապետությունում 1 5 3 26 01 ԲԴԾ-ից «Ներմուծման մաքսատուրքեր, որոնք վճարվել են Բելառուսի Հանրապետության տարածքում «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին համապատասխան» ներմուծման մաքսատուրքերի վերադարձների ընդհանուր գումարը կազմել է 9 442,9հազ. բել. ռուբլի եւ 2018 թվականի համեմատ նվազել է 2 877,89 հազ. բել. ռուբլով կամ 23,4 %-ով:

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 03/04/4716 հարցմամբ՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձների համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղազախստանի Հանրապետությունում 106101 ԲԴԾ-ից «Ներմուծման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ վճարներ, որոնք վճարվել են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին համապատասխան») ներմուծման մաքսատուրքերի վերադարձների գումարը կազմել է 882 520,0 հազ. տենգե եւ 2018 թվականի համեմատ նվազել է 1 594 107,5 հազ. տենգեով կամ 64,4 %-ով):

Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեի 2020 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4-9-2-34/3089-И հարցմամբ՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի վերադարձներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղրղզստանի Հանրապետությունում 11 511 400 ԲԴԾ-ից «Ներմուծման մաքսատուրքեր, որոնք վճարվել են ՄՄՍ դրույքաչափերով եւ հաշվեգրվել են «Եվրասիական տնտեսական միությանը միանալու մասին» պայմանագրին համապատասխան») ներմուծման մաքսատուրքերի վերադարձների ընդհանուր գումարը կազմել է 4 906,9հազ. սոմ եւ 2018 թվականի համեմատ ավելացել է 2 735,8 հազ. սոմով կամ 44,3 %-ով):

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4-9-2-34/3089-И հարցմամբ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ռուսաստանի Դաշնությունում 153 110 110 1001 0000 180 ԲԴԾ-ից «Ներմուծման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ վճարներ), որոնք վճարվել են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի

մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելվածին համապատասխան», ներմուծման մաքսատուրքերի վերադարձների ընդհանուր գումարը կազմել է 4 084 308,5 հազ. ռուս. ռուբլի եւ 2018 թվականի համեմատ նվազել է 2 221 133,5 հազ. ռուս. ռուբլով կամ 35 %-ով:

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ ЗИ 03-139/03-03 հարցմամբ՝ Դաշնային մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ վերադարձներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքներով խախտումներ չեն արձանագրվել:

7.7. Բաշխման եւ անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվից տվյալ անդամ պետության բյուջե, ինչպես նաեւ մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվարկի կազմակերպումը: Անդամ պետությունների բոլոր լիազորված մարմինների կողմից Արձանագրությամբ սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների պահպանումը (Արձանագրության 11-12-րդ կետեր):

Անդամ պետությունների բյուջեներ փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվարկը եւ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից դրանց բաշխումը, սահմանված նորմատիվների համաձայն, իրականացվում են ավտոմատացված տեղեկատվական համակարգերի միջոցով:

2019 թվականին ներմուծման մաքսատուրքերի բաշխումը հաշվարկվել է ըստ նորմատիվների՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված, 2017 թվականի ապրիլի 11-ին Մոսկվայում կատարված՝ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի առանձին դրույթների կիրառման վերաբերյալ արձանագրությանը համապատասխան՝

Հայաստանի Հանրապետության համար՝ 1,220 տոկոս,

Բելառուսի Հանրապետության համար՝ 4,560 տոկոս,

Ղազախստանի Հանրապետության համար՝ 7,055 տոկոս,

Ղրղզստանի Հանրապետություն համար՝ 1,900 տոկոս,

Ռուսաստանի Դաշնության համար՝ 85,265 տոկոս:

Ստուգման ընթացքում լիազորված մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների պահպանման խախտումներ չեն արձանագրվել:

7.8. Անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման (Արձանագրության 10-րդ կետ) եւ անդամ պետություններ դրանց փոխանցման (Արձանագրության 11-րդ, 13-րդ կետեր) ժամկետների պահպանումն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից: Ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցման վերաբերյալ հաշվարկային (վճարային) փաստաթուղթը (հանձնարարականը) անդամ պետություններ ուղարկելու յուրաժամանակությունը (Արձանագրության 13-րդ կետ):

2019 թվականին Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումն իրականացվել է Արձանագրությանը համապատասխան անդամ պետության՝ հաշվետու ամսաթվին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, որի ընթացքում ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրվել են լիազորված մարմնի միասնական հաշվին:

2019 թվականին Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումը անդամ պետությունների միջեւ իրականացվել է Արձանագրությանը համապատասխան՝

ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման հաշվետու ամսաթվին՝ լիազորված մարմնի միասնական հաշվին:

Անդամ պետություններ ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումն իրականացվել է անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին անդամ պետության՝ լիազորված մարմնի միասնական հաշվին հաշվեգրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ Արձանագրությանը համապատասխան:

Լիազորված մարմնի կողմից անդամ պետություններ ներմուծման մաքսատուրքերի գումարները փոխանցվելու վերաբերյալ հաշվարկային (վճարային) փաստաթղթերը (հանձնարարականները) ազգային (կենտրոնական) բանկ ուղարկելու ժամկետների խախտումներ (յուրաքանչյուր օր՝ տեղական ժամանակով ժամը 14-ից ոչ ուշ) չեն արձանագրվել:

7.9. Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից արտարժութային հաշիվներին մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն անդամ պետության բյուջե որպես եկամուտ փոխանցելու յուրաժամանակությունը (Արձանագրության III բաժին):

Մեկ (առաջին) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկը պարտավոր է մյուս (երկրորդ) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկին վաճառել ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ առաջին անդամ պետության ազգային արժույթով այն գումարի դիմաց, որը հավասար է առաջին անդամ պետության ազգային արժույթով այն գումարին, որը, սույն Արձանագրությանը համապատասխան, փոխանցվել է երկրորդ անդամ պետության լիազորված մարմնի արտարժութային հաշվին:

Վաճառվող ԱՄՆ դոլարի գումարը որոշվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ առաջին անդամ պետության ազգային արժույթի պաշտոնական փոխարժեքով, որը սահմանվում է առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից՝ երկրորդ անդամ պետության լիազոր մարմնի արտարժութային հաշվին

առաջին անդամ պետության ազգային արժույթով դրամական միջոցների փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու պարտավորությունը պետք է կատարվի առաջին անդամ պետության (կենտրոնական) բանկի կողմից երկրորդ անդամ պետության արտարժութային հաշվին առաջին անդամ պետության ազգային արժույթով համարժեք գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ:

Անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի եւ լիազորված մարմինների կողմից կնքված՝ ընթացիկ հաշիվների պայմանագրերի, առաջնային բանկային ու գանձապետական փաստաթղթերի ընտրանքային ստուգման արդյունքներով արտարժութային հաշիվների վրա անդամ պետությունների լիազորված մարմիններից ստացված ներմուծման մաքսատուրքերի գումարների՝ անդամ պետությունների բյուջեներ ոչ ժամանակին փոխանցելու դեպք 2019 թվականին չի արձանագրվել:

7.10. Անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ տեղեկությունների՝ համաձայնեցված եւ հաստատված ձեւերով փոխանակման ժամանակ բոլոր լիազորված մարմինների կողմից Արձանագրության IV բաժնով սահմանված կարգի եւ ժամկետների պահպանում: Այլ անդամ պետությունների լիազորված մարմիններից ստացված ներմուծման մաքսատուրքերի մուտքերի, բաշխված ներմուծման մաքսատուրքերի եւ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտների գումարների դինամիկայի վերլուծություն:

Արձանագրության 40-րդ կետին համապատասխան՝ անդամ պետության լիազորված մարմինը յուրաքանչյուր օր՝ ոչ ուշ, քան տեղական ժամանակով ընթացիկ օրվա ժամը 16:00-ին (Հայաստանի Հանրապետության համար՝ քաղ. Երեւանի ժամանակը, Բելառուսի Հանրապետության համար՝ քաղ. Մինսկի ժամանակը, Ղազախստանի Հանրապետության համար՝ քաղ. Նուր-Սուլթանի ժամանակը, Ղրղզստանի Հանրապետության համար՝ քաղ. Բիշքեկի ժամանակը,

Ռուսաստանի Դաշնության համար՝ քաղ. Մոսկվայի ժամանակը) այլ անդամ պետությունների լիազորված մարմիններ է ուղարկում հաշվետու օրվա ընթացքում ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ տեղեկատվությունը (այսուհետ՝ Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ հաշվետվություն):

Ստուգմամբ արձանագրվել է, որ Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ հաշվետվությունը լիազորված մարմինների կողմից ուղարկվել է էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային կապուղիներով փաստաթղթերի գրաֆիկական էլեկտրոնային պատճենների տեսքով՝ ԵՏՀ կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 2 թիվ 222 որոշմամբ հաստատված ձեւով:

Ստուգմամբ արձանագրվել են նաեւ Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ հաշվետվությունը ոչ ժամանակին (տեղական ժամանակով ժամը 16:00-ից ուշ) ուղարկելու առանձին դեպքեր:

Այսպես՝ Բելառուսի Հանրապետության գլխավոր պետական գանձապետարանի կողմից 2019 թվականի ապրիլի 12-ին Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ հաշվետվությունը կողմերի լիազորված մարմիններ է ուղարկվել 2019 թվականի ապրիլի 15-ին, ժամը 16:36-ին:

Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կոմիտեի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 26-ին Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ հաշվետվությունը կողմերի լիազորված մարմիններ է ուղարկվել 2019 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը 16:52-ին:

Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից 2019 թվականի նոյեմբերի 14-ին Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ հաշվետվությունը ֆինանսների նախարարության գլխավոր պետական

գանձապետարան է ուղարկվել 2019 թվականի նոյեմբերի 15-ին, ժամը 16:07-ին: Հարկ է նշել նաեւ, որ Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 2019 թվականի սեպտեմբերի 13-ի Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ հաշվետվությունը Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարության գլխավոր պետական գանձապետարանի կողմից ստացվել է 2019 թվականի սեպտեմբերի 16-ին բելառուսական ժամանակով՝ ժամը 14:29-ին, ուղարկողի ժամանակով՝ 17:29-ին, 2019 թվականի օգոստոսի 30-ի հաշվետվությունը՝ 2019 թվականի սեպտեմբերի 2-ին բելառուսական ժամանակով՝ ժամը 15:28-ին, ուղարկողի ժամանակով՝ 18:28-ին: Ընդ որում՝ Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի մոտ բացակայում է տվյալ հաշվետվություններն ուղարկելու ժամանակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ուղարկման սերվերից համապատասխան տեղեկությունները հեռացնելու պատճառով:

2019 թվականին անդամ պետությունների բյուջեներ ներմուծման մաքսատուրքերի մուտքագրումը եւ բաշխումը ներկայացված են 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

մլն. ԱՄՆ դոլար

Հայաստանի Հանրապետություն		Բելառուսի Հանրապետություն		Ղազախստանի Հանրապետություն		Ղրղզստանի Հանրապետություն		Ռուսաստանի Դաշնություն	
միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է	*130,8*	*միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է*	673,0	*միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է*	679,1	*միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է*	161,3	*միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է*	11 094,2
բաշխված է սեփական բյուջեում	*1,6*	բաշխված է սեփական բյուջեում	30,7	բաշխված է սեփական բյուջեում	47,9	բաշխված է սեփական բյուջեում	3,1	բաշխված է սեփական բյուջեում	9 459,5
ԵԱՏՄ անդամ պետություններին, այդ թվում՝	*129,2*	*ԵԱՏՄ անդամ պետություններին, այդ թվում՝*	642,3	*ԵԱՏՄ անդամ պետություններին, այդ թվում՝*	631,2	*ԵԱՏՄ անդամ պետություններին, այդ թվում՝*	158.2	*ԵԱՏՄ անդամ պետություններին, այդ թվում՝*	1 634,7
Բելառուսի Հանրապետություն	*6,0*	Հայաստանի Հանրապետություն	8,2	Հայաստանի Հանրապետություն	8,3	Հայաստանի Հանրապետություն	2,0	Հայաստանի Հանրապետություն	135,3
Ղազախստանի Հանրապետություն	*9,2*	Ղազախստանի Հանրապետություն	47,5	Բելառուսի Հանրապետություն	47,9	Բելառուսի Հանրապետություն	7,4	Բելառուսի Հանրապետություն	505,9
Ղրղզստանի Հանրապետություն	*2,5*	Ղրղզստանի Հանրապետություն	12,8	Ղրղզստանի Հանրապետություն	12,9	Ղազախստանի Հանրապետություն	11,4	Ղազախստանի Հանրապետություն	782,7
Ռուսաստանի Դաշնություն	*111,5*	Ռուսաստանի Դաշնություն	573,8	Ռուսաստանի Դաշնություն	579,0	Ռուսաստանի Դաշնություն	137,5	Ղրղզստանի Հանրապետություն	210,8
մուտքագրվել է ԵԱՏՄ անդամ պետություններից, ընդամենը	*153.3*	*մուտքագրվել է ԵԱՏՄ անդամ պետություններից, ընդամենը*	550,1	*մուտքագրվել է ԵԱՏՄ անդամ պետություններից, ընդամենը*	852,5	*մուտքագրվել է ԵԱՏՄ անդամ պետություններից, ընդամենը*	239,0	*մուտքագրվել է ԵԱՏՄ անդամ պետություններից, ընդամենը*	1 402,1
այդ թվում՝		այդ թվում՝		այդ թվում՝		այդ թվում՝		այդ թվում՝	
Բելառուսի Հանրապետությունից	*8,2*	Հայաստանի Հանրապետությունից	6,0	Հայաստանի Հանրապետությունից	9,2	Հայաստանի Հանրապետությունից	2,5	Հայաստանի Հանրապետությունից	111,2
Ղազախստանի Հանրապետությունից	*8,2*	Ղազախստանի Հանրապետությունից	30,8	Բելառուսի Հանրապետությունից	47,7	Բելառուսի Հանրապետությունից	12,7	Բելառուսի Հանրապետությունից	574,2
Ղրղզստանի Հանրապետությունից	*2.0*	Ղրղզստանի Հանրապետությունից	7,4	Ղրղզստանի Հանրապետությունից	11,5	Ղազախստանի Հանրապետությունից	12,8	Ղազախստանի Հանրապետությունից	577,4
Ռուսաստանի Դաշնությունից	*134.9*	Ռուսաստանի Դաշնությունից	505,8	Ռուսաստանի Դաշնությունից	784,1	Ռուսաստանի Դաշնությունից	211,1	Ղրղզստանի Հանրապետությունից	139,3
ընդամենը մուտքագրվել է Հայաստանի Հանրապետության բյուջե	*154,9*	*ընդամենը մուտքագրվել է Բելառուսի Հանրապետության բյուջե*	580,8	*ընդամենը մուտքագրվել է Ղազախստանի Հանրապետության բյուջե*	900,4	*ընդամենը մուտքագրվել է Ղրղզստանի Հանրապետության բյուջե*	242,1	*ընդամենը մուտքագրվել է Ռուսաստանի Դաշնության բյուջե*	10 861,6
հաշվարկների սալդո	24,1	*հաշվարկների սալդո*	-92,2	*հաշվարկների սալդո*	221,3	*հաշվարկների սալդո*	80,7	*հաշվարկների սալդո*	-232,6

Ծանոթագրություն. *2019 թվականի ընթացքում դրամի պաշտոնական միջին տարեկան փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է* 480,45*դրամ 1 դոլարի համար, բելառուսական ռուբլու պաշտոնական միջին տարեկան փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 2,*0914 *բել. ռուբլի, տենգեի պաշտոնական միջին տարեկան փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ՝* 382,75 *տենգե, սոմի պաշտոնական միջին տարեկան փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ՝* 69,7893 *սոմ, ռուսական ռուբլու պաշտոնական միջին տարեկան փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ՝* 64,6184 ռուս.*ռուբլի:*

2019 թվականին կողմերի բյուջեներ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի ընդհանուր գումարը կազմել է 12,7 մլրդ ԱՄՆ դոլար:

Կողմերի բյուջեներ ներմուծման մաքսատուրքերի մուտքագրումների դինամիկան մի շարք տարիների ընթացքում ներկայացված է հիստոգրամի վրա:

Կողմերի բյուջեներ ներմուծման մաքսատուրքերի մուտքագրումները, ընդամենը մլրդ ԱՄՆ դոլար



Տվյալների վերլուծությունը վկայում է նախորդ վերլուծվող ժամանակահատվածների համեմատ 2019 թվականին ներմուծման մաքսատուրքերի մուտքագրումների աճի մասին:

Հայաստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքի եւ բաշխման դինամիկայի վերլուծությունը ներկայացված է 2-րդ աղյուսակում.

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետություն	2018 թվական, հազ. դրամ	2019 թվական, հազ. դրամ	Շեղումը, հազ. դրամ	Աճի տեմպը, %
Հայաստանի Հանրապետության տարածքում վճարված ներմուծման մաքսատուրքերը	**54 366 141,9**	**62 829 141,4**	**8 462 999,5**	**115,6**
որոնցից բաշխված է՝				
Հայաստանի Հանրապետությանը	663 266,9	766 515,5	103 248,6	115,6
Բելառուսի Հանրապետությանը	2 479 096,1	2 865 008,9	385,912,8	115,6
Ղազախստանի Հանրապետությանը	3 835 531,3	4 432 595,9	597 064,6	115,6
Ղրղզստանի Հանրապետությանը	1 032 956,7	1 193 753,7	160 797,0	115,6
Ռուսաստանի Դաշնությանը	46 355 290,9	53 571 267,4	7 215 976,5	115,6
Փոխանցվել է ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ	**53 702 875,0**	**62 062 625,9**	**8 359 750,9**	**115,6**
Մուտքագրվել է Հայաստանի Հանրապետության բյուջե ԵԱՏՄ անդամ պետություններից	**71 870 244,2**	**73 658 635,0**	**1 788 390,8**	**102,5**
այդ թվում՝				
Բելառուսի Հանրապետությունից	3 748 603,6	3 945 548,3	196 944,7	105,3
Ղազախստանի Հանրապետությունից	4 052 951,0	3 953 268,0	-99 683,0	97,5
Ղրղզստանի Հանրապետությունից	1 315 329,3	950 978,3	-364 351,0	72,3
Ռուսաստանի Դաշնությունից	62 753 360,3	64 808 840,4	2 055 480,1	103,3
Ընդամենը Հայաստանի Հանրապետության բյուջե մուտքագրվել են եկամուտներ	**72 533 511,1**	**74 425 150,5**	**1 891 639,4**	**102,6**
ԵԱՏՄ անդամ պետությունների հետ հաշվարկների սալդո*	**18 167 369,2**	**11 596 009,1**	**X**	**X**

* *Ներմուծման մաքսատուրքերի՝ ստացված եւ փոխանցված գումարների միջեւ տարբերությունը*

2019 թվականի համար անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 73 658 635հազ. դրամ կամ 102,5% 2018 թվականի մակարդակի համեմատ:

Հայաստանի Հանրապետության եւ անդամ պետությունների միջեւ փոխադարձ հաշվարկների սալդոն ձեւավորվել է դրական՝ կազմելով 11 596 009,1 հազ. դրամ (2018 թվականին՝ 18 167 369,2 հազ. դրամ):

Բելառուսի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքի եւ բաշխման դինամիկայի վերլուծությունը ներկայացված է 3-րդ աղյուսակում.

Աղյուսակ 3

Բելառուսի Հանրապետություն	2018 թվական հազ. բել. ռուբլի	2019 թվական հազ. բել. ռուբլի	Շեղում, հազ. բել. ռուբլի	Աճի տեմպը, %
Բելառուսի Հանրապետության տարածքում վճարված ներմուծման մաքսատուրքերը	**1 302 593,2**	**1 407 472,3**	**104 879,1**	**108,1**
որոնցից բաշխված է՝				
Հայաստանի Հանրապետությանը	15 891,6	17 171,2	1 279,6	108,1
Բելառուսի Հանրապետությանը	59 398,2	64 180,7	4 782,5	108,1
Ղազախստանի Հանրապետությանը	91 898,0	99 297,2	7 399,2	108,1
Ղրղզստանի Հանրապետությանը	24 749,3	26 742,0	1 992,7	108,1
Ռուսաստանի Դաշնությանը	1 110 656,1	1 200 081,3	89 425,2	108,1
Փոխանցված է ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ	**1 243 195,0**	**1 343 291,7**	**100 096,7**	**108,1**
Մուտքագրվել է Բելառուսի Հանրապետության բյուջե ԵԱՏՄ անդամ պետություններից	**1 085 407.3**	**1 150 418,6**	**65 011,3**	**106,0**
այդ թվում՝				
Հայաստանի Հանրապետությունից	10 404,8	12 461,1	2 056,3	119,8
Ռուսաստանի Դաշնությունից	995 540,3	1 057 886,9	62 346,6	106,3

Ղազախստանի Հանրապետությունից	58 821,9	64 506,7	5 684,8	109,7
Ղրղզստանի Հանրապետությունից	20 640,3	15 563,9	-5 076,4	75,4
Ընդամենը Բելառուսի Հանրապետության բյուջե մուտքագրվել են եկամուտներ	**1 144 805,5**	**1 214 599,3**	**69 793,8**	**106,1**
ԵԱՏՄ անդամ պետությունների հետ հաշվարկների սալդո*	**-157 787,7**	**-192 873,1**	**X**	**X**

2019 թվականի ընթացքում անդամ պետություններից Բելառուսի Հանրապետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 1 150 418,6 հազ. բել. ռուբլի կամ 106%՝ 2018 թվականի մակարդակի համեմատ:

Բելառուսի Հանրապետության եւ անդամ պետությունների միջեւ փոխադարձ հաշվարկների սալդոն ձեւավորվել է բացասական՝ կազմելով «մինուս» 1 հազ. բել. ռուբլի (2018 թվականին՝ «մինուս» 157 787,7 հազ. բել. ռուբլի):

Ղազախստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքի եւ բաշխման դինամիկայի վերլուծությունը ներկայացված է 4-րդ աղյուսակում.

Աղյուսակ 4

Ղազախստանի Հանրապետություն	**2018 թվական, հազ. տենգե**	**2019 թվական, հազ. տենգե**	**Շեղումը, հազ. տենգե**	**Աճի տեմպը, %**
Ղազախստանի Հանրապետության տարածքում վճարված ներմուծման մաքսատուրքերը	**218 295 501,4**	**259 925 212,2**	**41 629 710,8**	**119,1**
որոնցից բաշխված է՝				
այդ թվում՝				
Հայաստանի Հանրապետության բյուջե	2 889 891,2	3 171 087,6	281 196,4	109,7

* *Ներմուծման մաքսատուրքերի՝ ստացված եւ փոխանցված գումարների միջեւ տարբերությունը Բելառուսի Հանրապետության մասով*

Բելառուսի Հանրապետության բյուջե	9 954 274,9	11 852 589,7	1 898 314,8	119,1
Ղազախստանի Հանրապետության բյուջե	15 287 404,6	18 337 723,7	3 050 319,1	120,0
Ղրղզստանի Հանրապետության բյուջե	4 147 614,5	4 938 579,0	790 964,5	119,1
Ռուսաստանի Դաշնության բյուջե	186 016 316,2	221 625 232,2	35 608 916,0	119,1
Փոխանցվել է ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ	**203 008 096,8**	**241 587 488,5**	**38 579 391,7**	**119,0**
Մուտքագրվել է Ղազախստանի Հանրապետության բյուջե ԵԱՏՄ անդամ պետություններից	**282 893 094,2**	**326 281 076,7**	**43 387 982,5**	**115,3**
այդ թվում՝				
Հայաստանի Հանրապետությունից	2 747 380,4	3 521 357,1	773 976,7	128,2
Բելառուսի Հանրապետությունից	15 498 101,7	18 258 581,4	2 760 479,7	117,8
Ղրղզստանի Հանրապետությունից	5 351 966,4	4 387 105,0	-964 861,4	82,0
Ռուսաստանի Դաշնությունից	259 295 645,7	300 114 033,2	40 818 387,5	115,7
Ընդամենը Ղազախստանի Հանրապետության բյուջե մուտքագրվել են եկամուտներ	**298 180 498,8**	**344 618 800,4**	**46 438 301,6**	**115,6**
ԵԱՏՄ անդամ պետությունների հետ հաշվարկների սալդո*	**79 884 997,4**	**84 693 588,2**	**X**	**X**

2019 թվականի ընթացքում ԵԱՏՄ անդամ պետություններից Ղազախստանի Հանրապետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 326 281 076,7 հազ. տենգե կամ 115,3%՝ 2018 թվականի մակարդակի համեմատ:

Ղազախստանի Հանրապետության եւ անդամ պետությունների միջեւ փոխադարձ հաշվարկների սալդոն ձեւավորվել է դրական՝ կազմելով 84 693 588,2 հազ. տենգե (2018 թվականին՝ 79 884 997,4 հազ. տենգե):

Ղրղզստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքի եւ բաշխման դինամիկայի վերլուծությունը ներկայացված է 5-րդ աղյուսակում.

---

* *Ներմուծման մաքսատուրքերի՝ ստացված եւ փոխանցված գումարների միջեւ տարբերությունը՝ Ղազախստանի Հանրապետության մասով*

Աղյուսակ 5

Ղրղզստանի Հանրապետություն	2018 թ. հազ. սոմ	2019 թ. հազ. սոմ	Շեղումը, հազ. սոմ	Աճի տեմպը, %
Ղրղզստանի Հանրապետության տարածքում վճարված ներմուծման մաքսատուրքերը	**15 488 604,3**	**11 257 721,0**	**-4 230 883,3**	**72,7**
որոնցից բաշխված է՝				
Հայաստանի Հանրապետությանը	188 961,0	137 344,2	-51 616,8	72,7
Բելառուսի Հանրապետությանը	706 280,4	513 352,1	-192 928,3	72,7
Ղազախստանի Հանրապետությանը	1 092 721,0	794 232,2	-298 488,8	72,7
Ղրղզստանի Հանրապետությանը	294 283,5	213 896,7	-80 386,8	72,7
Ռուսաստանի Դաշնությանը	13 206 358,4	9 598 895,8	-3 607 462,6	72,7
Փոխանցվել է ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ	**15 194 320,8**	**11 043 824,3**	**-4 150 496,5**	**72,7**
Մուտքագրվել է Ղրղզստանի Հանրապետության բյուջե ԵԱՏՄ անդամ պետություններից	**15 728 206,1**	**16 678 787,5**	**950 581,4**	**106,0**
այդ թվում՝			0,0	
Հայաստանի Հանրապետությունից	146 810,4	172 109,2	25 298,8	117,2
Բելառուսի Հանրապետությունից	831 891,2	883 648,4	51 757,2	106,2
Ղազախստանի Հանրապետությունից	826 044,6	889 867,5	63 822,9	107,7
Ռուսաստանի Դաշնությունից	13 923 459,9	14 733 162,4	809 702,5	105,8
Ընդամենը Ղրղզստանի Հանրապետության բյուջե մուտքագրվել են եկամուտներ	**16 022 489,6**	**16 892 684,2**	**870 194,6**	**105,4**
ԵԱՏՄ անդամ պետությունների հետ հաշվարկների սալդո*	**533,885,3**	**5,634,963,2**	**X**	**X**

2019 թվականի ընթացքում ԵԱՏՄ անդամ պետություններից Ղրղզստանի Հանրապետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 16 678 787,5 հազ. սոմ կամ 106%՝ 2018 թվականի մակարդակի համեմատ:

---

* *Ներմուծման մաքսատուրքերի՝ ստացված եւ փոխանցված գումարների միջեւ տարբերությունը՝ Ղրղզստանի Հանրապետության մասով*

Ղրղզստանի Հանրապետության եւ անդամ պետությունների միջեւ փոխադարձ հաշվարկների սալդոն ձեւավորվել է դրական՝ կազմելով 5 634 963,2 հազ. սոմ (2018 թվականին՝ 533 885,3 հազ. սոմ):

Ռուսաստանի Դաշնությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքի եւ բաշխման դինամիկայի վերլուծությունը ներկայացված է 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

Ռուսաստանի Դաշնություն	**2018 թվական, հազ. ռուս. ռուբլի**	**2019 թվական, հազ. ռուս. ռուբլի**	**Շեղումը, հազ. ռուս. ռուբլի**	**Աճի տեմպը, %**
Ռուսաստանի Դաշնության տարածքում վճարված ներմուծման մաքսատուրքերը	**673 049 010,7**	**716 890 142,4**	**43 841 131,7**	**106,5**
որոնցից բաշխված է՝				
Հայաստանի Հանրապետությանը	8 211 197,9	8 746 059,7	534 861,8	106,5
Բելառուսի Հանրապետությանը	30 691 034,9	32 690 190,5	1 999 155,6	106,5
Ղազախստանի Հանրապետությանը	47 483 607,7	50 576,599,5	3 092 991,8	106,5
Ղրղզստանի Հանրապետությանը	12 787 931,2	13 620 912,7	83 981,5	106,5
Ռուսաստանի Դաշնությանը	573 875 239,0	611 256 379,9	3 38 140,9	106,5
Փոխանցվել է ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ	**99 173 771,7**	**105 633 762,5**	**6 459 990,8**	**106,5**
Մուտքագրվել է Ռուսաստանի Դաշնության բյուջե ԵԱՏՄ անդամ պետություններից	**86 002 037,6**	**90 601 407,1**	**4 599 369,5**	**105,3**
այդ թվում՝				
Հայաստանի Հանրապետությունից	6 042 212,9	7 185 818,3	1 143 605,4	118,9
Բելառուսի Հանրապետությունից	34 241 086,4	37 104 001,2	2 862 914,8	108,4
Ղազախստանի Հանրապետությունից	33 912 320,4	37 308 030,7	3 395 710,3	110,0
Ղրղզստանի Հանրապետությունից	11 806 417,9	9 003 556,9	-2 802 861,0	76,3
Ընդամենը Ռուսաստանի Դաշնության բյուջե մուտքագրվել են եկամուտներ	**659 877 276,6**	**701 857 787,0**	**41 980 510,4**	**106,4**
ԵԱՏՄ անդամ պետությունների հետ հաշվարկների սալդո*	**-13 171 734,1**	**-15 032 355,4**	**X**	**X**

* *Ներմուծման մաքսատուրքերի՝ ստացված եւ փոխանցված գումարների միջեւ տարբերությունը՝ Ռուսաստանի Դաշնության մասով*

2019 թվականի ընթացքում անդամ պետություններից Ռուսաստանի Դաշնության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 90 601 407,1հազ. ռուս. ռուբլի կամ 105,3%՝ 2018 թվականի մակարդակի համեմատ:

Ռուսաստանի Դաշնության եւ անդամ պետությունների միջեւ փոխադարձ հաշվարկների սալդոն ձեւավորվել է բացասական՝ կազմելով «մինուս» 15 032 355,4 հազ. ռուս. ռուբլի (2018 թվականին՝ «մինուս» 13 171 734,1 հազ. ռուս. ռուբլի):

7.11. Անդամ պետության լիազորված մարմնի կողմից ոչ աշխատանքային օրերի, այն արտարժութային հաշվի վավերապայմանների փոփոխության մասին, որին պետք է փոխանցվեն ներմուծման մաքսատուրքերի գումարները, ինչպես նաեւ այլ՝ Արձանագրության իրագործման համար անհրաժեշտ տվյալների փոփոխության մասին մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին տեղեկացնելու յուրաժամանակությունը (Արձանագրության 16-18-րդ կետեր), ինչպես նաեւ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից մյուս լիազորված մարմիններից այդպիսի տեղեկատվություն ստանալու յուրաժամանակությունը:

Ստուգմամբ պարզվել է, որ 2019 թվականին անդամ պետությունների լիազորված մարմիններն ազգային օրենսդրությանը համապատասխան սահմանված ոչ աշխատանքային օրերի եւ այլ տվյալների փոփոխության մասին ժամանակին տեղեկացրել են մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին:

Արտարժույթներով այն հաշիվների վավերապայմանները, որոնց վրա ենթակա էին փոխանցման ներմուծման մաքսատուրքերի գումարները, 2019 թվականին չեն փոփոխվել:

7.12. Անդամ պետության արտարժութային հաշվին մյուս անդամ պետության կողմից դրամական միջոցներ չփոխանցելու կամ ոչ

ամբողջությամբ փոխանցելու (բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բացակայության մասին լիազորված մարմիններին չտեղեկացնելու կամ դրանց փաստացի առկայության պայմաններում բաշխման ենթակա գումարների բացակայության վերաբերյալ տեղեկատվություն ուղարկելու դեպքում), իր միասնական հաշվից պարտապան անդամ պետության հաշվին փոխանցումների կասեցման վերաբերյալ փաստերի առկայությունը: Այդ դեպքում գոյացած պարտքի եւ փոխանցման գծով կետանցի դիմաց տոկոսների մարման լիակատարությունը (Արձանագրության 20-28-րդ կետեր):

2019 թվականին անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից դրամական միջոցների չփոխանցման կամ ոչ ամբողջական փոխանցման փաստեր չեն արձանագրվել:

7.13. Անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկատվության փոխանակման կարգի իրականացման արդյունքները (Արձանագրության 45-51-րդ կետեր):

Արձանագրության դրույթները կանոնակարգում են ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկատվության փոխանակման կարգը, պարունակում են տեղեկությունների այն կազմը, որոնցով փոխանակվում են ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմինները, այն աղբյուրները, որոնցից ձեւավորվում է նշված տեղեկատվությունը (Արձանագրության 46-47-րդ կետեր), ԱՄՆ դոլարով ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկատվությունը եւ արտարժույթի փոխարժեքների կիրառման կարգը (Արձանագրության 48-րդ կետ):

Արձանագրության 49-րդ կետով նախատեսված է, որ ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկատվության փոխանակման տեխնոլոգիական կանոնակարգերը մշակվում եւ հաստատվում են Հանձնաժողովի կողմից:

Ընդհանուր գործընթացով նախատեսվում է անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների) ավտոմատացված փոխանակում, ինչպես նաեւ մաքսային մարմինների կողմից Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ դրանք ներկայացնելը Հանձնաժողով:

Ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված՝ կենտրոնական մաքսային մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաեւ այն ԵՏՀ ներկայացնելն իրականացվել է էլեկտրոնային կապուղիներով՝ այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի գրաֆիկական էլեկտրոնային պատճենի տեսքով (Արձանագրության 51-րդ կետ):

Էլեկտրոնային տեսքով նշված տեղեկությունների փոխանակումն ապահովելու նպատակով՝ Հանձնաժողովի կողմից տեղեկատվական համակարգերի լրամշակումը եւ ինտեգրված համակարգի ենթահամակարգերի կարգաբերումն իրականացվում են «Ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունների փոխանակումն ապահովելու, ինչպես նաեւ այդպիսի տեղեկություններ պարունակող տվյալների բազա ձեւավորելու, վարելու եւ օգտագործելու» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) շրջանակներում, որը նախատեսված է ԵՏՀ կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 29 որոշմամբ հաստատված՝ ԵԱՏՄ շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի 51-րդ կետով:

ԵՏՀ կոլեգիայի 2016 թվականի դեկտեմբերի 19-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների իրագործման կարգը հաստատելու մասին» թիվ 169 որոշման 30-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները ԵՏՀ համակարգման ներքո ընդհանուր գործընթացի գործողության մեջ մտնելու ընթացակարգի կատարումն ապահովում են տեխնոլոգիական փաստաթղթերը հաստատելու վերաբերյալ Հանձնաժողովի կոլեգիայի ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 9 ամիսը չգերազանցող ժամկետում:

2017 թվականի հունվարի 21-ից գործում է ԵՏՀ կոլեգիայի 2016 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 166 որոշումը, որով հաստատված են ընդհանուր գործընթացի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցների իրացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերը:

Ընդ որում՝ համաձայն Հանձնաժողովի տեղեկատվության, ներկա պահին Միության ինտեգրված համակարգում ընդհանուր գործընթացի իրագործման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման մշակումն ավարտված չէ: Տեղեկատվական փոխգործակցության թեստավորում անցկացնելու եւ ընդհանուր գործընթացը գործողության մեջ դնելու մասով միջոցառումների պլանավորումն իրականացվելու է՝ հաշվի առնելով ընդհանուր գործընթացի իրագործման մեջ ներգրավված ինտեգրացիոն հատվածի բաղադրիչները եւ ենթահամակարգերը պատրաստ լինելու վերաբերյալ տեղեկատվությունը:

Ազգային հատվածները պատրաստ լինելու վերաբերյալ տեղեկատվություն Հանձնաժողովը չի ստացել: Ընդ որում՝ Դաշնային մաքսային ծառայությունը հայտնել է 2020 թվականի հուլիսից մաքսային մարմինների տեղեկատվական-ծրագրային միջոցների թեստավորում իրականացնելու պատրաստակամության մասին՝ ավտոնոմ թեստավորման շրջանակներում ընդհանուր գործընթացն իրագործելու նպատակով:

Ընդհանուր գործընթացին միանալու մասով անդամ պետությունների մաքսային մարմնից ստացված տեղեկատվության համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ընդհանուր գործընթացի իրագործման պատրաստվածությունը բացակայում է՝ ֆինանսավորման հետ կապված խնդիրների պատճառով.

Բելառուսի Հանրապետությունում՝ տեղեկատվական համակարգերը լրամշակված են, պատրաստ են իրականացնել թեստավորումը.

Ղազախստանի Հանրապետությունում՝ տվյալ ընդհանուր գործընթացը ներառված է Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական համակարգերի խնդիրների պլանի 2021 թվականի նախագծում.

Ղրղզստանի Հանրապետությունում՝ իրականացվում է մաքսային վարչարարության թվայնացման նախագծի իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսների սահմանման աշխատանք.

Ռուսաստանի Դաշնությունում՝ ապահովված է 2020 թվականի III եռամսյակում ինտեգրացիոն թեստավորման պատրաստակամությունը:

7.14. 2010-2018 թվականների համատեղ ստուգումների արդյունքներով Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների առաջարկների եւ հանձնարարականների կատարումը:

«Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) հաշվեգրման ու բաշխման կարգը սահմանելու եւ կիրառելու մասին» 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրի (այսուհետ՝ 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագիր) նորմերի եւ Արձանագրության՝ լիազորված մարմինների կողմից պահպանման հարցերի առնչությամբ՝ 2010-2018 թվականներին անցկացված համատեղ վերահսկիչ միջոցառումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների մեջ տեղ են գտել անդամ պետությունների պետական մարմիններին եւ ԵՏՀ-ին ուղղված առաջարկություններ եւ հանձնարարականներ:

2012 թվականի Հաշվետվության առաջարկությունների 2-րդ կետի 2.1 ենթակետով ԵՏՀ-ին առաջարկվել է նախաձեռնել 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրում այնպիսի լրացումների կատարում, որոնցով նախատեսվում են՝

պետական Ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների (այսուհետ՝ ՖՎԲՄ) համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների հիման վրա վերջնական փաստաթղթի տեսքը.

այն մարմինները, որոնց պետք է ուղարկվի այդպիսի փաստաթուղթը՝ տեղեկացնելու եւ անհրաժեշտության դեպքում արձագանքման միջոցառումներ ձեռնարկելու նպատակով, ինչպես նաեւ այն ուղարկելու ժամկետները.

համատեղ վերահսկիչ միջոցառման ընթացքում ՖՎԲՄ-ների կողմից հայտնաբերված խախտումները կողմերի լիազորված եւ այլ մարմինների կողմից վերացման մեխանիզմը.

համատեղ վերահսկիչ միջոցառման ընթացքում հայտնաբերված խախտումների համար լիազորված մարմինների պատասխանատվությունը:

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի նախագիծը հավանության է արժանացել ԵՏՀ կոլեգիայի (ԵՏՀ կոլեգիայի 2018 թվականի մայիսի 29-ի թիվ 101 կարգադրություն) եւ ԵՏՀ խորհրդի (ԵՏՀ խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 26 կարգադրություն) կողմից:

Ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի անցկացման նպատակով Համաձայնագրի նախագիծն ուղարկվել է ԵԱՏՄ երկրներ: Մինչ օրս ներպետական ընթացակարգերը չեն ավարտվել Ղազախստանի Հանրապետությունում:

Ղազախստանի Հանրապետությունում նշված գործընթացներն ավարտվելուց հետո նշված Համաձայնագրի նախագիծը կներկայացվի պետությունների ղեկավարների ստորագրմանը՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին:

2012 թվականի Հաշվետվության առաջարկությունների 6-րդ կետով կողմերի մաքսային մարմիններին առաջարկվել է ապահովել ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկատվության փոխանակումը:

ԵԱՏՄ ինտեգրված տեղեկատվական համակարգում ընդհանուր գործընթացի իրագործման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման մշակումն ավարտված չէ, կենտրոնական մաքսային մարմինների միջեւ արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ընդհանուր գործընթացի օգտագործմամբ տեղեկատվության փոխանակում չի իրականացվել:

2016 թվականի Հաշվետվության առաջարկությունների 9.3 կետով՝ հաշվի առնելով 2016 թվականի հաշվետվության 9.2. կետում նշված՝ Ղազախստանի Հանրապետության ազգային էկոնոմիկայի նախարարության դիմումի՝ ԵԱՏՄ դատարանի կողմից ուսումնասիրման արդյունքը, Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմիններին անհրաժեշտ էր միջոցներ ձեռնարկել 2014-2016 թվականներին բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների մասով Արձանագրության դրույթների պահպանման ուղղությամբ եւ արդյունքների վերաբերյալ մինչեւ 2018 թվականի մայիսի 1-ը տեղեկացնել կողմերի ՖՎԲՄ-ներին:

Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեի կողմից 2018 թվականի ապրիլի 28-ի թիվ 9-5-2-37/1634-И, թիվ 9-5-2-37/1635-И, թիվ 9-5-2-37/1636-И, թիվ 9-5-2-37/1640-И գրություններով կողմերի ՖՎԲՄ-ներին ուղարկված տեղեկատվության համաձայն՝ ներմուծման այն մաքսատուրքերի գումարների մասով Արձանագրության դրույթները չկիրառելու իրավաչափության հարցով, որոնց մասով վճարման պարտավորությունն առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից հետո, եւ որոնք վճարվել են 2014-2016 թվականներին ընդերքօգտագործողների կողմից, Ղազախստանի Հանրապետության ազգային էկոնոմիկայի նախարարության դիմումը ԵԱՏՄ դատարանի կողմից ուսումնասիրելու արդյունքի բացակայության պատճառով Հաշվետվության առաջարկությունների 9.3 կետը 2016 թվականի համար չի կատարվել:

2018 թվականի Հաշվեփվության առաջարկությունների 9.1 կետով Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեին առաջարկվել է անցկացնել 2018 թվականին չբաշխվող 106112 ԲԴԾ-ով ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման հիմնավորվածության ստուգում: Արդյունքների մասին մինչեւ 2020 թվականի մայիսի 1-ը տեղեկացնել կողմերի ՖՎԲՄ-ներին (կցելով ստուգման նյութերը):

Ղազախստանի Հանրապետությունում COVID-19 կորոնավիրուսային վարակի կապակցությամբ արտակարգ դրության եւ կարանտինի ռեժիմի սահմանման հետ կապված՝ Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեի կողմից 2018 թվականին չբաշխվող 106112 ԲԴԾ-ով հաշվեգրման հիմնավորվածության ստուգման արդյունքներն ուղարկվել են ուշացումով՝ ԵԱՏՄ անդամ երկրների ՖՎԲՄ՝ 2020 թվականի մայիսի 13-ին, Ռուսաստանի Դաշնության Հաշվիչ պալատին՝ Ռուսաստանի Դաշնությունում Ղազախստանի Հանրապետության դեսպանատան նամակով՝ 2020 թվականի նոյեմբերի 24-ին:

Աուդիտորական ստուգման արդյունքներով պարզվել է, որ 106112 ԲԴԾ-ով ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2018 թվականին ընդհանուր առմամբ կազմել են 1 962,4 հազ. տենգե, որոնցից ներմուծման այն մաքսատուրքերը, որոնք վճարվել են ընդերքօգտագործողների կողմից, եւ որոնց մասով վճարման պարտավորությունն առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից հետո, կազմել են 1 944,5հազ. տենգե:

2018 թվականի Հաշվեփվության առաջարկությունների 9.2 կետով Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմնին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել 2014-2018 թվականներին բաշխման եւ փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման եւ անդամ պետություններին փոխանցման մասով Արձանագրության դրույթների պահպանման համար (2014 թվականին՝ 14,3 մլն տենգե, 2015 թվականին՝ 3 594,3 մլն տենգե, 2016 թվականին՝ 4 721,3 մլն տենգե, 2017 թվականին՝ 1 473,3 մլն տենգե գումարի չափով եւ 2018 թվականին՝ հաշվի առնելով Հաշվիչ կոմիտեի

ստուգման արդյունքները եւ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման եւ փոխանցման արդյունքների վերաբերյալ մինչեւ 2020 թվականի մայիսի 1-ը տեղեկացնել կողմերի ՖՎԲՄ-ներին:

Ներմուծման մաքսատուրքերի վերոնշյալ գումարը լիազորված մարմնի կողմից չի բաշխվել եւ ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ չի փոխանցվել, կողմերի ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինները 2018 թվականի Հաշվետվության 9.2 կետի կատարման մասին տեղեկացված չեն, այսպիսով՝ Հաշվետվության 2018 թվականի 9.2 կետը չի կատարվել:

ԵՏՀ կոլեգիայի 2019 թվականի դեկտեմբերի 3-ի ««Եվրասիական տնտեսական միության» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 26-րդ հոդվածի եւ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված) դրույթները Ղազախստանի Հանրապետության կողմից պահպանվելու մասին» թիվ 215 որոշմամբ՝ Ղազախստանի Հանրապետությունը ծանուցված է ԵԱՏՄ մասին պայմանագրի 26-րդ հոդվածի դրույթները կատարելու անհրաժեշտության մասին:

Հանձնաժողովն ստացել է պետական մարմինների կողմից ձեւավորված դիրքորոշմամբ՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գրությունը՝ անդամ պետությունների բյուջեների միջեւ ընդերքօգտագործման վերաբերյալ կայուն պայմանագրերի, ինչպես նաեւ արտադրանքը բաժանելու մասին համաձայնագրերի շրջանակներում առաջացած ներմուծման մաքսատուրքերի բաշխման անթույլատրելիության եւ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:

2018 թվականի Հաշվետվության առաջարկությունների 9.2 կետով անդամ պետությունների լիազորված մարմիններին առաջարկվել է ապահովել ՖՎԲՄ ստուգման մեջ չներառված ժամանակահատվածի համար Արձանագրության նորմերի կատարման վերաբերյալ տեղեկատվության պահպանումը:

Միեւնույն ժամանակ, Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի մոտ բացակայում էր 2019 թվականի սեպտեմբերի 13-ի եւ 2019 թվականի օգոստոսի 30-ի ընթացքում ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ հաշվետվությունը ժամանակին ուղարկելու վերաբերյալ տեղեկատվությունը՝ ուղարկման սերվերից համապատասխան տեղեկությունները հեռացնելու պատճառով:

8. Եզրահանգումներ.

8.1. 2019 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմինների՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարության, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի, Դաշնային գանձապետարանի միջտարածաշրջանային գործառնական վարչության կողմից ընդհանուր առմամբ ապահովվել է ԵԱՏՄ անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերը բաշխելու կարգի պահպանումը:

Լիազորված մարմինների կողմից 2019 թվականին հիմնականում պահպանվել են Արձանագրության նորմերը՝ ներմուծման մաքսատուրքերի մուտքերի առանձնացված հաշվառման, դրանք յուրաքանչյուր անդամ պետության համար սահմանված նորմատիվներին համապատասխան բաշխելու մասով:

Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից այլ անդամ պետությունների լիազորված մարմիններին ոչ աշխատանքային օրերի, արտարժութային հաշվի վավերապայմանների փոփոխության վերաբերյալ իրազեկումն իրականացվել է սահմանված ժամկետներում:

8.2. 2019 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի ընդհանուր գումարը կազմել է 12 739,7 մլն ԱՄՆ դոլար (2018 թվականին՝ 12 296,2 մլն ԱՄՆ դոլար), 2018 թվականի համեմատ ընդհանուր առմամբ դիտվում է մուտքերի աճ՝ 443,5 մլն ԱՄՆ դոլարով կամ 3,6 %-ով:

Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին միասնական հաշվի ներմուծման մաքսատուրքերի մուտքերը (հաշվի առնելով հաշվանցումներն ու վերադարձները) կազմել են 62 829 141,4 հազ. դրամ. Բելառուսի Հանրապետությունում՝ 1 407 472,3 հազ. բել. ռուբլի. Ղազախստանի Հանրապետությունում՝ 259 925 212,2 հազ. տենգե. Ղրղզստանի Հանրապետությունում՝ 11 257 721,0 հազ. սոմ. Ռուսաստանի Դաշնությունում՝ 716 890 142,4 հազ. ռուս. ռուբլի:

Բելառուսի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում ձեւավորվել է ներմուծման մաքսատուրքերի գծով փոխադարձ հաշվարկների բացասական սալդո (ներմուծման մաքսատուրքերի՝ ստացված եւ փոխանցված գումարների տարբերությունը)՝ համապատասխանաբար «մինուս» 192 873,1 հազ. բել. ռուբլի եւ «մինուս» 15 032 355,4 հազ. ռուս. ռուբլի:

8.3. 2019 թվականին Ղազախստանի Հանրապետությունում եղել են 2010 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ներմուծված ապրանքների մասով 60 947,9 հազ. տենգե գումարի չափով ներմուծման մաքսատուրքերը չբաշխելու եւ անդամ պետությունների բյուջեներ չփոխանցելու դեպքեր («Ումիրզակ-Սերվիս» ՍՊԸ՝ 2 912,9 հազ. տենգե, «Արման ՀՁ» ՍՊԸ՝ 31,4 հազ. տենգե եւ «Վեզերֆորդ Օյլֆիլդ Սերվիսեզ» ՍՊԸ՝ 58 003,6 հազ. տենգե) եւ խախտվել է

Արձանագրությամբ սահմանված՝ անդամ պետությունների միջեւ ներմուծման այն մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգը, որոնց վճարման պարտավորությունը Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Բացի այդ, ղազախական կողմը 2014-2018 թվականներին չի բաշխել եւ չի փոխանցել սեպտեմբերի 1-ից հետո ներմուծված ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքեր (2014 թվականին՝ 14,3 մլն տենգե, 2015 թվականին՝ 3 594, 3 մլն տենգե, 2016 թվականին՝ 4 721,3 մլն տենգե, 2017 թվականին՝ 1 473,3 մլն տենգե, 2018 թվականին՝ 1 944,5 մլն տենգե գումարի չափով):

Ղրղզստանի Հանրապետությունում արձանագրվել է 211,6 հազ. սոմ գումարի ներմուծման մաքսատուրքերը չբաշխելու եւ անդամ պետությունների բյուջեներ չփոխանցելու դեպքեր՝ Ղրղզստանի Հանրապետության՝ Միությանը անդամակցելուց հետո ներմուծված ապրանքների մասով («Գրանիտ» ՍՊԸ) եւ, համապատասխանաբար, խախտվել է Արձանագրությամբ սահմանված անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգը:

8.4. Ստուգմամբ արձանագրվել են նաեւ Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման վերաբերյալ հաշվետվությունն ոչ ժամանակին (տեղական ժամանակով ժամը 16:00-ից ուշ) ուղարկելու առանձին դեպքեր՝ Բելառուսի Հանրապետության գլխավոր պետական գանձապետարանի կողմից, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կոմիտեի կողմից եւ Ղրղզստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության Կենտրոնական գանձապետարանի կողմից:

8.5. 2019 թվականին ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված՝ կենտրոնական մաքսային մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաեւ ԵՏՀ այն ներկայացնելն իրականացվում են էլեկտրոնային կապուղիներով՝ այդ տեղեկատվությունը պարունակող

փաստաթղթի գրաֆիկական էլեկտրոնային պատճենի տեսքով՝ դրանք որպես եկամուտ ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու միջոցով:

2019 թվականին Կենտրոնական մաքսային մարմինների միջեւ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ընդհանուր գործընթացի օգտագործմամբ տեղեկատվության փոխանակում չի իրականացվել:

9. Առաջարկություններ.

Շարադրվածի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեն, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատը եւ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատն առաջարկում են՝

9.1. Եվրասիական տնտեսական միությանը՝ քննարկել Ղազախստանի Հանրապետության կողմից 2014-2019 թվականներին ներմուծման մաքսատուրքերի՝ ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ չբաշխելուն առնչվող հարցը 2010 թվականի սեպտեմբերի 1-ից հետո Ղազախստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մասով, հետագայում, անհրաժեշտության դեպքում՝ ԵԱՏՄ դատարան դիմելու հնարավորությամբ: Արդյունքների մասին մինչեւ 2021 թվականի հուլիսի 1-ը տեղեկացնել կողմերի ՖՎԲՄ-ներին:

9.2. Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեին՝ անցկացնել չբաշխվող 106112 ԲԴԾ-ով ներմուծման մաքսատուրքերի 2019 թվականին հաշվեգրման եւ դուրսգրման հիմնավորվածության ստուգում: Արդյունքների մասին մինչեւ 2021 թվականի մայիսի 1-ը տեղեկացնել կողմերի ՖՎԲՄ-ներին (կցելով ստուգման նյութերը):

9.3. Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմնին՝ Միջոցներ ձեռնարկել 2014-2019 թվականներին բաշխման եւ փոխանցման ենթակա

ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման եւ անդամ պետություններին փոխանցման մասով Արձանագրության դրույթների պահպանման համար (2014 թվականին՝ 14,3 մլն տենգե, 2015 թվականին՝ 3 594,3 մլն տենգե, 2016 թվականին՝ 4 721,3 մլն տենգե, 2017 թվականին՝ 1 473,3 մլն տենգե, 2018 թվականին՝ 1 944,5 մլն տենգե, 2019 թվականին՝ հաշվի առնելով Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեի ստուգման արդյունքները)։Ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման եւ փոխանցման արդյունքների վերաբերյալ մինչեւ 2021 թվականի սեպտեմբերի 1-ը տեղեկացնել կողմերի ՖՎԲՄ-ներին:

9.4. Անդամ պետությունների իրավասու մարմիններին՝

ապահովել Արձանագրության նորմերի կատարման հետ կապված՝ ՖՎԲՄ ստուգմամբ չներառված ժամանակահատվածի համար տեղեկատվության պահպանումը.

Ապահովել Արձանագրության 40-րդ կետով նախատեսված տեղեկատվության ուղարկումը կողմերի լիազորված մարմիններին:

9.5. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին՝ ուղարկել համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Հայաստանի Հանրապետության կառավարություն:

9.6. Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեին՝ համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ուղարկել Բելառուսի Հանրապետության կառավարություն եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

9.7. Ղազախստանի Հանրապետության հաշվիչ կոմիտեին՝ համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ուղարկել Ղազախստանի Հանրապետության կառավարություն:

9.8. Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատին՝ ուղարկել համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը Ղրղզստանի Հանրապետության Ժոգորկու Կենեշ եւ Ղրղզստանի Հանրապետության կառավարություն:

9.9. Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատին՝ համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ուղարկել Ռուսաստանի Դաշնության կառավարություն, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնային խորհուրդ, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դուման:

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամ՝	Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի նախագահի տեղակալ՝	Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի անդամ՝
Կ.Վ. Առուստամյան	Դ.Վ. Բասկո	Կ.Ֆ. Պլոտնիկով

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի աուդիտոր՝	Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի աուդիտոր՝
Ա.Տ. Բայգազակով	Ա.Ն. Բատուրկին

ՎԵՐԱՊԱՀՈՒՄ (ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ)

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի

19 փետրվարի 2021 թվականի

օրինակ թիվ ___

«Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի (*այսուհետ՝ Հաշվիչ կոմիտե)*, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի, Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կողմից համատեղ ստուգում՝ 2019 թվականին Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության պահպանման նկատմամբ» 2014-2019 թվականներին վերաբերող՝ համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվության (*այսուհետ՝ Հաշվետվություն)*

9.1. եւ 9.3 կետերի առնչությամբ.

«Հաշվի առնելով ղազախական կողմի դիրքորոշումն առ այն, որ ընդերքօգտագործողների ծախսերի փոխհատուցումը, այդ թվում՝ ներմուծման մաքսատուրքերի մասով իրականացվում է բացառապես Ղազախստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին՝ առանց ԵԱՏՄ մյուս անդամ

պետությունների համապարտ պատասխանատվության, ընդերքօգտագործման ոլորտում կնքված պայմանագրերի շրջանակներում Ղազախստանի Հանրապետությունում գանձված մաքսատուրքերի գումարների նկատմամբ Արձանագրության դրույթների կիրառումը կհանգեցնի ԵԱՏՄ անդամ պետություններից մեկի (Ղազախստանի Հանրապետության) ազգային (տնտեսական) շահերի խախտմանը»:

Հաշվետվության **7.5, 9.1 եւ 9.3. կետերի առնչությամբ՝** 2019 թվականի վերաբերյալ վերջնական կարծիքը կներկայացվի Հաշվիչ կոմիտեի ստուգման արդյունքներով:

Հիմք ընդունելով շարադրվածը՝ հաշվիչ կոմիտեի կողմից Համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ստորագրվում է Վերապահումով (հատուկ կարծիքով):

Ղազախստանի Հանրապետության
հանրապետական բյուջեի կատարման
նկատմամբ վերահսկողության
հարցերով հաշվիչ կոմիտեի անդամ՝ *[ստորագրություն]* **Կ. Պլոտնիկով**

Տպված է 5 (հինգ) օրինակից՝

թիվ 1 օրինակը՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի համար.

թիվ 2 օրինակը՝ Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի համար.

թիվ 3 օրինակը՝ Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի համար.

թիվ 4 օրինակը՝ Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի համար:

թիվ 5 օրինակը՝ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի համար:

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի,
Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի,
Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման
նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի,
Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի եւ
Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կոլեգիաների
(խորհուրդների, լիազորված անձանց) համատեղ նիստի

19 փետրվարի 2021 թվականի թիվ _____

1. «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի, Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կողմից համատեղ ստուգում՝ 2019 թվականին Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից՝ ««Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի մասին» արձանագրության պահպանման նկատմամբ» համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների մասին

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ

վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի եւ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կոլեգիաները (խորհուրդները, լիազորված անձինք) որոշեցին.

1.1. Հաստատել համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների մասին հաշվետվությունը:

1.2. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին՝ համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների մասին հաշվետվությունն ուղարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Հայաստանի Հանրապետության կառավարություն:

1.3. Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեին՝ համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ուղարկել Բելառուսի Հանրապետության կառավարություն եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

1.4. Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեին՝ համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ուղարկել Ղազախստանի Հանրապետության կառավարություն:

1.5. Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատին՝ ուղարկել համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը Ղրղզստանի Հանրապետության Ժոգորկու Կենեշ եւ Ղրղզստանի Հանրապետության կառավարություն:

1.6. Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատին՝ համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ուղարկել Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնային խորհուրդ եւ Պետական դումա, Ռուսաստանի Դաշնության կառավարություն:

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի նախագահ	Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի նախագահ	Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի նախագահ
Լ.Ս. Յոլյան	Վ.Ն. Գերասիմով	Ն.Ն. Գոդունովա

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի նախագահի Ժ.պ.	Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի նախագահի տեղակալ
Ա.Մ. Սադիրկուլովա	Գ.Ս. Իզոտովա